ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2023թ. № 443

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ԹԻՎ 317 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 30-ի թիվ 62-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 12-ի «Կարինե Պարույրի Լամբարյանին կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 317 որոշման 1-ին կետում գրված «0,002» թիվը փոխարինել «0,00192» թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունիսի 5
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2023թ. № 44

## ԲԱՎԱԿԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԸՍՏ ԿՏԱԿԻ ՎԱՀԱԳՆ ՀԵՆՐԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱԺՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ, ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՀԱԳՆ ՀԵՆՐԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ԲԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՀԱՄԱՐԸ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 9-րդ կետի 4-րդ ենթակետի «գ» պարբերությամբ, հիմք ընդունելով Վահագն Հենրիկի Պետրոսյանի խնամակալ Բավական Արարատի Պետրոսյանի դիմումը և Սպիտակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել Վահագն Հենրիկի Պետրոսյանի խնամակալ Բավական Արարատի Պետրոսյանին հրաժարվել ըստ կտակի Վահագն Հենրիկի Պետրոսյանին հասանելիք պարտադիր բաժնի իրավունքից, միաժամանակ կնքել համաձայնագիր ժառանգական գույքի բաժանման վերաբերյալ, մասնավորապես հրաժարվել Երևան, Նոր Նորք, Թոթովենցի փողոց, 11/2 շենք, 46 բնակարան և Երևան, Նոր Նորք, Թոթովենցի փողոց, 11/2 շենք, 2 ավտոտնակ հասցեի անշարժ գույքերից և OPEL CORSA 1.2, նույնականացման համարը՝ W0L000073V6131024, թողարկման տարեթիվը՝ 1997թ., ավտոմեքենայից և Ակբա բանկ ԲԲԸ-ում 10 000 000 /տասը միլիոն/ ՀՀ դրամ գումարը փոխանցել Վահագն Հենրիկի Պետրոսյանին, ում անունով բացված հաշվեհամարը տիրապետվելու է խնամակալ՝ Բավական Պետրոսյանի կողմից, ով իրավունք կունենա տարվա մեջ օգտագործել գումարը ոչ ավելի քան 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով: Մեկ տարվա ընթացքում ավելի գումարի օգտագործման համար խնամակալության և հոգաբարձության մարմինը կտա հավելյալ թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունիսի 05
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2023թ. № 445

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի ԹԻՎ 233 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 3-ի թիվ 233 որոշման 1-ին կետում Լիանա Գնելի Հովսեփյանի (ծնված 09.03.1994թ.) ծննդյան տարեթիվը սխալմամբ գրվել է «1992», իսկ Գնել Կարլենի Հովսեփյանի (ծնված 07.01.1963թ.) ազգանունը սխալմամբ գրվել է «Հոսեփյան», հիմք ընդունելով Լիանա Գնելի Հովսեփյանի և Գնել Կարլենի Հովսեփյանի անձնագրային տվյալները, Լիանա Գնելի Հովսեփյանի ներկայացուցիչ Միեր Մինասյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 3-ի «Այգեստան թաղամասում գտնվող բնակելի տան, բնակելի նշանակության շինությունների և հողամասի նկատմամբ Սամվել Հովսեփյանի ընտանիքի իրավունքը վերականգնելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 233 որոշման 1-ին կետում նշված «1992» թիվը փոխարինել «1994» թվով, իսկ «Հոսեփյան» բառը փոխարինել «Հովսեփյան» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունիսի 5
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2023 թ. № 446

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-095-0072-0030 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԵՎ 06-095-0072-0028 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով 2022 թվականի օգոստոսի 25-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25082022-06-0042 և 2022 թվականի օգոստոսի 25-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25082022-06-0044 վկայականները, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 30-ի թիվ 57-Ա որոշումը, Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 837 որոշումը և Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06095SJP2J3K) ՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ գյուղ Ջրաշեն, 8-րդ փողոց 15-րդ նրբանցք 15 հողամաս» հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 06-095-0072-0030 կադաստրային ծածկագրով 0,101921 հեկտար մակերեսով և «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ գյուղ Ջրաշեն, 8-րդ փողոց 15-րդ նրբանցք 14 հողամաս» 06-095-0072-0028 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,603633 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերը:

2. Սույն որոշման 1-ին կետով միավորված անշարժ գույքին տրամադրել «Սպիտակ գյուղ

3. Ջրաշեն, 8-րդ փողոց, 15-րդ նրբանցք, 14 հողամաս» հասցեն:

4. Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունիսի 5
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«05» հունիսի 2023թ. N⁰ 447

## ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ԶՈՅԱ ՍԵՅՐԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, ԱՆԻ ՍԵՅՐԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԵՎ ՏԻԳՐԱՆ ՍԵՅՐԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 9-րդ կետի 4-րդ ենթակետի «գ» պարբերությամբ, հիմք ընդունելով Սեյրան Սամվելի Ավետիսյանի դիմումը և Սպիտակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել օտարել Գայանե Մուշեղի Տոնոյանին, Աիդա Կորյունի Տոնոյանին, Ալինա Կորյունի Տոնոյանին, Մարիամ Կորյունի Տոնոյանին, Գուրգեն Կորյունի Տոնոյանին, Զոյա Սեյրանի Ավետիսյանին, Անի Սեյրանի Ավետիսյանին և Տիգրան Սեյրանի Ավետիսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող՝ Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք., Երևանյան խճուղի 129 շենք, 29 հասցեում գտնվող բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07022023-06-0006 վկայական)՝ անչափահասներ Զոյա Սեյրանի Ավետիսյանի, Անի Սեյրանի Ավետիսյանի և Տիգրան Սեյրանի Ավետիսյանի մասով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունիսի 5
ք. Սպիտակ